Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

74

8652

15 JAN 2010

Մ. Տ. ՇԻՈՏ

07
Ա-83

ԴԱՏ

(ՔՐԻԹԻՔԱԿԱՆ ԱՆԱԼԻԶ)

ՌՈՒՍՃՈՒՔ
Печатница Б. Н. Малджиевъ
1904.

07
Ա-83

Ա-83
2 6 SEP 2006

Մ. Տ. ՇԻՈՏ

ԳԱՏ

(ՔՐԻԹԻՔԱԿԱՆ ԱՆԱԼԻԶ)

РУСЧУКЪ
Печатница Б. Н. Малджиевъ
1904.

19586

14572
21.02.2013
27802-ա.3
ՀԱՅԿ-ՍՍՀ Ա. Մ. Մաշտոցյան անվան ձեռագրերի ինստիտուտ
10749-57
(2993)
39
1292-83

ԴԱՏ

(ՔՐԻԹԻԿԱԿԱՆ ԱՆԱԼԻԶ)

I.

„ԴԱՏ“. — այդ պարզ, եռատառ վերնագիրը կկրէր այն ըմբոստ, մտրակող, յառաջադէմ Դաղափարների ներմ կուսակից վիմատիպ հայտարարութիւնը, որ սկսաց հրատարակուել ինքնական թուականների սկզբին, Տաճկա–Հայաստանի հայաշատ քաղաքներէ մէկին մէջ։ Այդ „թերթը“ Հայկական բազմաչարչար Դատի մեր ձառոր արձագանքն էր, որ կոչած էր ոչխարացած թրքահային մէջ ներշնչելու ինքնաճանաչութեան, խոր գիտակցութեան և գարերէ իվեր երեսի վրայ ձգած հերոսութեան ոգին։ Վերին ատաիճանի կարեւոր, նպատակայարմար և ժամանակի պահանջներին այնքա՞ն համապատասխան մի գեր էր, որ կը ստանձնէր Դատը։ Որովհետև այն ժամանակ, երբ ազգերը, աւելի քան երբ և է, կը զինուին ոտքէ մինչև գլուխ՝ գիտութեան, քաղաքակրթութեան և պողպատի վերջին խօսքով, գոյութեան կռուում, չի ընկճուելու համար, այդ ժամանակ, կ'ասեմ թրքահայ մեր արիւնակիցները դատապարտած էին

գերեզմանային անշարժութեան։ Եւ թրքահայ ժողովրդին այդ մորիէական քնէն զարթեցնելու համար անհրաժեշտ էին Դատի նման աստուածխօսող պարբերական հրատարակութիւններ։

Այդ անհրաժեշտութիւնն աւելի ուշագրաւ կը լինի, երբ յիշենք պոլսահայ կաշկանդուած մամուլի անախորժ վիճակը, քանի որ այդ մամուլը ինքնըստինքեան կը ներկայանար որպէս մի բոյն անվերջ շողոքորթութիւնների, տիրացուական փառաբանութիւնների և պառաւական հեքիաթաբանութեան...

Հայ ազգի ամբողջական կաղմի գլխաւոր երակը Ծաճկա–Հայաստանում—ամբոխը—թողնուած էր ճակատագրի կամքին. բուն Երկրում նրա ցաւերի մասին խօսող ո՛չ մի հրատարակութիւն գոյութիւն չ'ունէր։ 500 տարուան ստրկութեան արդիւնք եղող կործանարար գըլխակորութիւնը, յանցաւոր վարուեցողութիւնը թրքահայ ժողովրդին անընդունակ էին դարձրել որևէ գեղեցիկ, յառաջադիմական, ցնցող քայլի. իսկ այդ պատմական դժբաղդութեան դէմ մաքառող արտասահմանեան քաղաքական օրգանները թէ ահագին դժուարութիւններով մուտք կը գործէին թրքահայ ժողովրդի զանազան խաւերի մէջ և թէ իրենց սճով անմատչելի էին մնալ!

II.

Դատի էջերում հրապարակ դուրս եկան նոյն այդ ամբոխի մէջէն ձեռնհաս երիտասարդներ, հետզհետէ իրենց մէջ ընդունելով նորանոր թարմ, ժողովրդական ուժեր, և ըստ կարգին անսովոր եռանդով առաջ տանել իրենց սիրելի գործը։

Այդ տեղ դուք կը հանդիպէիք և՛ նպատակայարմար քաղաքների աչքի ընկնող արդիւնաբերներէն — Լեռնցի, Բաֆֆու և նմանների գրուածքներէն։

Երկրացին կը կարդար Դատի իւրաքանչիւր համարը խորին յափշտակութեամբ և կըզդար թէ ինչպէ՞ս կը մաքրուի, կը գեղեցկանայ իրա ներքին աշխարհը, ինչպէ՞ս կ'ընդարձակուի իւր ըմբռնումների սահմանը։

Մինչև այդ ժամանակ ինձ նման շատերը գեռ ևս չ'գիտէին՝ ինչի՞ է պէտք մեր կեանքը, ինչո՞ւ կ'ապրինք մենք, ի՞նչ կը նշանակէ գոյութեան կռիւ...

Ուտել, ապրել և անհետ կորչել — այդ էր ահա, մինչ այդ, մեր կեանքի գոյութեան միակ նպատակը. բայց որ մարդիկ պէտք է ունենան աւելի բարձր, աւելի սրբազան նպատակ կեանքի՝ այդ մասին ո՛չ մենք կարող էինք մտածել և ոչ էլ մեզ մտածել կըտային։ Մեզ հաւատացրել էին, որ աշխարհումս ամեն

բան անցաւոր է, կամ ուրիշ խօսքով, ունայնութիւն ունայնութեանց, որ կը նշանակէր, իմիջի այլոց, թողնել հասարակական կեանքը իւր վաղեմի վիճակում, քայլաչափ անգամ առաջ չի շարժուել, քանի որ աշխարհումս մահ կայ! Մեզ չ'էին հասկացրել, որ այնուամենայնիւ աշխարհումս կայ մի բան, որի համար սահմանուած չէ մահը։ — Գաղափարի մասին հասկացողութիւն չ'ունէինք մենք և չ'գիտէինք, որ թէև կը մեռնին մարդիկ, բայց չեն մեռնի նրանց Գործերը . . .

Մի խօսքով շարժուն մեքենաներ էինք մենք, սարուկներ, մեզ կոխոտող ոտքերի գարշապարը լղող և աշխարհումս կատարուող բոլոր անարդարութիւնները բնական երևոյթներ համարող։ Երևոյթներ, որոնց առջև պիտի խոնարհուէինք մենք՝ լոկ անասնային և աննպատակ մի գոյութիւն քարշ տալու համար. . .

Սակայն երբ գոյութիւն ստացաւ Դատը, նա բացեց մեր աչքերը, նա ցոյց տուեց մեզ, որ աշխարհի վրայ կ'արժէ ապրել՝ մերձաւորների վշտերը փարատելու և մարդկութեան վզին նստած անասնելի բեռը թեթևացնելու նպատակով։

Նա ցոյց տուեց, որ մեզմէն իւրաքանչիւրը՝ պատկանելով մարդկային մի առանձին, որոշ ցեղի՝ ունի և սրբազան պարտականութիւններ դէպի այդ ցեղը, դէպի այդ ցեղի

պատմական բնաշխարհը, դէպի մայրենի լեզուն ևն, ևն . . .

Ահա այդ ատեն միայն մենք սկսեցինք զգալ, որ աշխարհումս գոյութիւն ունի երկնքէն էլ սուրբ մի աստուածութիւն — Գաղափարը, որին պէտք էր զինուորագրուել՝ դերեզմանում պառկածներէն զանազանելու և մեր կեանքի արժէքն իմանալու համար։

Դատը կ'ուղղէր մեզ հետևեալ հարցը.

Կեա՞նք կ'անուանէք միթէ այն բան,
Երբ խեղճին քով, ինչպէս անբան,
Քարշ կուտաք ձեր հեղգ գոյութիւն՝
Չի տեսնելով թշուառութիւնն,
Որ ձեր կողքին ապրող մարդուն
Գլորել աքնի ահեղ անդունդ . . .

Եւ հուսկ յետոյ այսպէս կը շարունակէր.

Դիմենք. Հայ-եղբայր. դէպի այն ճամբան,
Ուր կեանքի ցոնած մեծ-մեծ փչեր կան.
Այնտեղ — այդ փչոտ ասպարէզին մէջ
Պէտք է որոնենք մեր գեղ Ապագան. . .
Քանի դեռ վեհ Գաղափարը
Զենք դարձուցած հիմնաքարը
Մեր խեղճ կեանքին եւ մեծ նեցուկ՝
Պիտ՝ զբ'լի միշտ արդարը . . .
Այո՛. զինուոր պիտի գրւինք
Գաղափարի ս. Դրօշին տակ.
Անո՛վ միայն պիտ՝ ոգեւորւինք,
Անո՛վ գտնենք ազնիւ վաստակ!

Եւ մենք, դանբաններոս, որ Դատի շեշտած խեղճի կողքին կ'ապրէինք՝ առանց նկա-

տելու անողոք իրականութեան թափած ճիգերը՝ մեզ մեր մարդկութիւնն ուրացնել տալու համար, — հապիւ հազ կը կռահէինք թէ ի՞նչ ասել կ'ուզէ Դատը «ձեր կողքին ապրող խեղճ մարդ» բառերով . . .

«Ամրապինդ բաղուկները չզթայած, բարբառող լեզուները կապկպած . . . և ամեն բան, ինչ որ կարող էր տալ այդ խեղճ մարդուն քաղաքացիական ազնիւ ու վսեմ համարձակութիւնը, այդ ամենը խլած անկէ . . . Այդ անհամարձակութեան մէջ է, որ պիտի կարող ըլլանք դանել խեղճութեան մայրը. . .» :

Եւ օր աւուր կ'երևէր աղատ ԽՕՍՔ–ի աղդեցութիւնը մինչ այդ նիրհող Երկրացիներուս վրայ . . . Դատի էջերը յաճախակի զարդարող գողտրիկ բանաստեղծութիւնները, սակայն ձայնագրուած, ամենակարճ ժամանակի ընթացքում կը հնչէին հայ մարդու ականջին տակ՝ սկսած Միքայէլ Մաքէն մինչև Վասպուրական, մինչև Բարձը Հայք, ելեքտրականացնելով մեր սրտերը և հետզհետէ մեր կախ ինկած գլուխներն ու բուունցքները վեր բարձրացնելով . . .

III.

Շատ չ'անցած՝ Դատը նեղ կը դանէր արդէն լոկ խօսքի սահմանափակ շրջանը և Մոսկուայոյ ոսկեզօծ Կոչնակին՝ կը թեւակոխեր Դուծի

շրջանը, ամեն կողմ տարածելով Կարմիր Աբշալոյսին ըստ արժանւոյն դիմաւորելու սրտաշարժ կոչեր :

Դատը, այս նոր շրջանում, կըսկսէր հանդիսաւոր այցելութիւններ անել մասսայի զանազան դասերին :

Տեսնելով որ մեր դարը, դժբաղդաբար, Երկաթի դար է, որ Թիւրքիայի նման մարդակեր ըէժիմով կառավարուող երկրում մեծ դեր ունի խաղալիք պողպատը, ըստ որում և այդ երկրում բնակուող հայ մարդիկ լոկ կուլտուրայի զէնքերով չեն կարող պահպանել ցանկալի գոյութիւն, — այդ պատճառով, ահա, Դատը իւր քայլերը կ'ուղղէ դէպի ծխով ու մուրով լի դարբնոցը, որտեղ կանգնած է Հայ–Դարբինը : Բայց ճանապարհին նա մի բոպէ աչքի առաջ կ'ունենայ «ցուրտ հովտի հարազատներին» և կը նկատէ, որ այնտեղի Դատը ոչ Դարբնոցի, այլ «Մամուլի» պիտի կարօտի առայժմ . . .

Հասնելով իւր որոնած շէնքին, Դատը ուրախութեամբ կը դիտէ, որ ինքը սխալած չէ, որ սալի յետև կանգնողը Հայ է : Բայց, աւա՜ղ, Հայ դարբինը կը կռէ և կը կոփէ բոլորովին այլ բան, քան մեզ անհրաժեշտ եղող առարկան : Եւ այդպէս կէս–ուրախ կէս–տրտում՝ նա խորհուրդ կը տայ ժրաջան արհեստաւորին, որ սա բարձրացնէ իւր ծանր մուրճը և նրանով կռէ–

կոչէ «ոչ թէ լոկ խաչի զարդ եղող և կամ արօրի մասնիկ առարկաներ, այլ մեզ և մեր տանը բարօրութիւն պարգևող սրբազան գործիներ» . . . Որովհետև ժամանակը կարճ է, այդ պատճառով նա խորհուրդ կը տայ «մինչ-շաբաթի օրն աղ չի դարիլ» . . .

Զա՛ր կ, զա՛ր կ, Դարբին, ժամը կանցնի,
Մեզ սուր չինէ փոխան կացնի.
Մեզ անհրաժեշտ գործին ատ է,
Որ Մեծ-Զարին պիտ՝ խրատէ . . .
Զէ՛նք տուր, դարբին, չո՛ւտ, մեր ձեռքը,
Ատ պիտ՝ քաւէ մեր Հին-Մեղքը . . .
Լաւ գիտցիր որ տարարաղդ հայք
Ատով գտնեն պիտ ազատ կեանք . . .

Շատ տարօրինակ կը թուի դարբինին այդ պատուէրը։ Կասկածելի նորութիւն է այդ նրա կարծիքով. ուստի և տրամադիր է շարունակել իւր գործը նախկին ուղղութեամբ։ Սակայն, որպէսզի անկոչ խորհրդատուն չի կարծի, թէ հայ դարբինը լոկ անընդունակութեան պատճառով չի ուզեր լսել նրան, նա բաւական ինքնավստահ տոնով կը յայտարարէ, որ ինքը գիտէ և կարող է ձուլել՝ վատի, ոխերմի կուրծք խրելիք գործիներ և նոյն իսկ բաւականաչափ պատրաստել է այդ օրեր, բայց ոչ իւր արիւնակիցների, այլ գաղան-տիրանի լակոտների համար . . . Հայ դարբինի կարծիքով այդ անմիտ գործիները «ոչ-մեզ», այլ «ներանց» սաղ կուգան. մեզ համար են մաճն ու մանգաղ. . .

Ցաւօք սրտի կը նկատէ Դատը, որ դարաւոր ստրկութիւնը՝ նոյնիսկ ստրկական շղթաների ջարդոտող գործիները ձուլողին փչացրել և Բաղամի էշէն էլ աւելի վատդրութեան է հասցրել...

Տեսնելով, վերջապէս, որ իւր բոլոր փորձերն անյաջող անցան՝ դարբինին համոզելու համար, — թէ «կասկածելի նորութիւնը անկասկածելի անդորրութեան դուռ պիտի բանայ մաճին ու մանգաղին մինակ վարժուածներուն առջև», — Դատը կը գայ այն դառն եզրակացութեան, որ բիրտ ուժը միայն կարող է խօսք հասկացնել անզգայացածներին... Եւ, երևակայեցէք, նա կրկին դարբինին վերջնիս իսկ շինած «սրբազան գործիներիս» անունով և այդ էլ եղաւ միակ միջոցը «խոհեմ» մարդու հաւատոյ հանգանակը յեղաշրջելու համար! «Հայ-Դարբինը անկէ վերջը լսեց ինձ ու սիրեց զիս», կ՚ասէ Դատը, և յաճախ կը գնայ նրա մօտ ոչ խորհուրդներ, այլ պատուէրներ տալու համար . . .

IV.

Հայաստանի հրաշազարդ դաշտերին մի այցելութիւն տալով՝ Դատը կը հրճուի սրտի խորքերէն։ Հոդեպարար տեսարանները նրան այնքան կը դրաւեն, որ նա չի նկատեր, թէ իւր ոտքերի ներքև փռուած է մի հետաքրքիր ծա-

ղիկ։ «Աղբար–արիւնա կը կոչի այդ ծաղիկը, սիրելի ընթերցող! Եւ որքան շա՞տ են այդ «անմեղա ծաղիկները, տէր Աստուա՜ծ . . . Աղբար–արիւն, և ո՞րտեղէն են գտած մարդիկ այդ անունը և տալ միայն Հայաստանի դաշտերի վրայ փուած այդ բոյսերին։ Իսկ ի՞նչ կը նշանակէ այդ։ Արդեօ՞ք մեր թշուառ եղբօր անպարտ արիւնով յօղուած լինելը կը յիշեցնէ նա, մեր խե՜ղճ, պաշտելի՜ եղբօր . . . Ա՜հ! Ծաղկի կերպարանքով կը ցցի մեր եղբօր անպարտ արիւնը Հայ–Հողին վրայ և որքա՜ն բան կը պատմեն մեզ այդ ծաղիկները . . .

— Ելի՛ր, ընթերցող, կ'ասէ Դատը, —լաւ է՛ քու ջղերդ, ընկիր Հայաստանի դաշտերը և փունջեր կազմէ «աղբար–արիւնա ծաղիկէն. այդ ծաղիկին վրա՛յ թող սևեռի քու մարած նայուածքը և քեզի յիշեցնէ, որ սա աղբար–արիւն կըսուի. . . Դու պիտի համբուրես այդ անմեղիկ ծաղկիկը, պիտի զմայլիս անորմով և զայն թրջես քու դառնագի արցունքով . . .

— Իսկ ո՞ր մեղքի համար է թափուած մեր եղբօր արիւնը։

Ահա մի սրտատոչոր և միաժամանակ ծանրակշիռ հարց, որ կը ցցի ձեզ դէմ և որի պատասխանը կը լինի այն, որ մեր անուշիկ եղբօր արիւնը դարերէ հետէ թափուել է և կը շարունակէ թափուել Մայր–Հայրենիքի դաշտերում այն միակ պատճառով համարեա, որ հայը

մաճէն ջոկ ուրիշ բան չի ճանաչել. իսկ այդ բանը քաղաքական օրէնքով — մեղք է։

Երանի՜ թէ մեր եղբօր արիւնը թարմացնէր Հայաստանի սուրբ հողը և կենդանութիւն պարգևէր նրան. բայց, ափսո՜ս, իրականութիւնը ցոյց կը տայ, որ առանց նպատակայարմար, նախատեսուած կազմակերպութեան թափուած արեան ծովերը շատ շուտ կը ցամաքին և այդ արեան դաշտում անզօր, ցածլիկ ծաղիկներ կը դոյանան, որոնք և մարդոց սրտերի կոխան կը դառնան . . .

— Ա՜խ, սրտի խորքերէն կը հառաչէ Դատը, թշուա՜ռ եղբայր, ինչո՞ւ այնքան աժան ես ծախել քու սուրբ արիւնը . . .

— Ո՛չ, կը գոչէ նա, — անհրաժեշտ է յեղաշրջել արիւն թափելու եղանակը և այդ յեղաշրջումը պէտք է տեղի ունենայ յանուն և իվերադարձ դարերէ իվեր մեզմէն խլուած մարդկային ու ցեղային իրաւունքների . . .

Ու Դատի անհանգիստ հոգին իւր դողդոջուն քայլերը կ'ուղղէ դէպի «Հին–Մեղքի զոհ հարազատներիս» կողմը, դէպի հայ գիւղացու խրճիթը, երգելով բանաստեղծի հետեւեալ տողերը.

Խաղաղ դաշտի որդիք, լեռները ելեք,
Արօր, գութան մոռնանք՝ հրացան առնենք.
Խեղդուած մեր բողոքն յայտնենք զէնքերով
Եւ մեր արդար Դատը վարենք արիւնով, —

Մեր կեանք, մեր մահ թող լինին ազատ,
Ճնշո՛ւած Հայի որդիք հարազատ։
Ստրկութեան շղթան խուլ կը շառաչէ,
Ազատութեան ճնշուած ձայնը կը գոչէ՝
«Հինգ դարերէ իվեր լքեալ հայ ազգը
Թող լուծէ այսօր իր որդոց վրէժը։
Մեր կեանք եւն.

Ցառա՛ջ իմենք անվախ, զարնենք այն ցածին,
Հանենք մեր օխն ու քէն՝ փրկենք գիւղացին.
Իմաց տանք Սուլթանին՝ անխի՛ղճ բռնաւոր,
Ծագեց հայ Հրոսակաց համար պայծառ օր։
Մեր կեանք եւն.

Ցրուած խմբեր Հաճըն, Զէյթունն, Սվեսիա,
Շտապենք, միանանք, կազմենք գունդ Հայկեայ.
Հայի ազատութեան պարգևնք դրօշակ,
Մեր կեանք մահով կազմած՝ կանգնենք նրա տակ։
Մեր կեանք, մեր մահ թող լինին ազատ,
Հայաստանի որդիք հարազատ։

V.

Երևակայական «բաղդաւորներ» ունինք, կ'ասէ Դատը, որոնք իրենց բոլոր պարտականութիւնները կատարած-վերջացրած կը համարին նրանով, որ խաչակնքելիս՝ նախ ձեռքերը դէպի ձախ, ապա դէպի աջ կը տանին։ Այդ Հայ-վաճառական դասն է։

Բայց, չէ՞ որ մեր շրջանէն դուրս գոյութիւն ունին և ուրիշները — «սարի լանջին, անապատին մէջ, ցուրտ հովիտին մէջ, լուսաւոր խորշերը ևնա, որտեղերում Հայ-ազան խիստ կամաչէ, եթէ նրան յիշեցնէք իւր հայ ծագումը, ուր նա մահացու մեղքերի կարգն է դասել իւր լեզուն իմանալն ու մանաւանդ գործածելը, ուր նրանք մէջքերէն հազար կտոր կը լինին և պատրաստ են իրենց թուխ մազերը հինայով կարմրացնելու, միայն թէ՝ բնութեան խորթ զաւակ հայի կարգը չի դասին, ուր օտարուհին է նրանց տան զարդը . . . «Խաչը վկայ, կը քստմնի մարդ, երբ կը տեսնէ, որ այդ Կրեսոսները XX դարի չէմքին աշխարհքը Սոդոմ-Գոմոր են շինած . . .

Բայց մինթէ մեր վամբիրը չա՞տ բանով կը պարծենայ. այսինքն թրքահայ վաճառականը կարո՞ղ է ցոյց տալ, որ ինքը Հայ է։

— Դուք ծնած-սնած էք Մայր-Հայաստանի մէջ, կ'ասէ Դատը, վայելած էք աստուածանման Արմենիայի օդն ու ջուրը, և այսօր բաղդի բերմամբ ձեզի շրջապատողներէն վեր էք բարձրացեր։ Եւ ինչպէ՞ս է տեղի ունեցեր այդ բարձրացումը — ձեր գոյութեան ամենաչօրեղ նեցուկի — թշնամ ամբոխի արիւն քրտինքով։ Փորերդ հաստցուցեր և դարձեր էք ձեզի կերակրողի գլխուն փորձանք . . .

«Դեռ յաւակնութիւն ալ ունիք ձեր մականուան «հանա» վերջաւորութեամբ անսուտ Հայ ներկայանալ, արդարանալու տքնելով այն բա-

նով, որ շատ տեղեր դեռ ինչ մնացած է. բայց այդ հերիք չէ!

Եթէ, իրօք, դու լոկ խօսքի մարդ չես և կուզես մատիդ ծայրովը շարժել աղգիդ մտածող դասի վրին ծանրացող ահագին բեռը. ապա կախէ՛ մեր կողքէն մէկ-մէկ կտրուկ սուր, տուր մեր ձեռքը մի կայծռոտ գործի, զարդարէ մեր կուրծքը փամփուշտաշարքերով, դի՛ր մեր գրպանը մի փոքր վիրակապ և մի պատառ հաց... Ու այնուհետև համբուրելով մեր ախոյեան ճակատը՝ ուղարկիր այնտեղ, ուր քեզ նման մարդիկ արեան լերդի մէջ կը թաղկին և պլշած աչքով կըսպասեն փրկչի... Ուր քու եղբայրները շղթաների ու հարկերի ծանրութեան տակ ընկճած՝ սրտերը տրաքեցնելու աստիճան կը տաքնան կը տաքնան...

Ահա այն ատեն միայն կասեմ, որ դու Հայ ես, Պ. Վաճառական! Հայ-ազան սուտ խուլ կը ձևանայ և կը շարունակէ ամենայն երկիւղածութեամբ երկրպագել ոսկի հորթին. ամբողջ Հայութիւնը նա չի փոխեր իր մի հատիկ փայլուն մետաղին հետ...

— Քու խղճի բթութիւնը, կը նկատէ Դատը, պիտի ստիպէ ինձ «Դարբնոցի խաղը կանչել» ...

VI.

Երբ մի ժողովրդի մտաւոր հորիզոնն այնքան ընդլայնուած չէ, որ նա դեռ ամեն ինչ մութ բարձունքէն կըսպասէ, այդպիսի ժողովրդին խօսք հասկացնել ուզողը իր կողքին պիտի ունենայ հոգեւորական կոչուող դասը։

Հայ մարդու աչքն էլ դարերէ հետէ սեռած է եղել դէպի այնտեղ, ուր Աստուած միայն գիտէ՝ մի բան կը լինի՞ թէ չէ...

Եւ քանի որ խուլ, անողոք, անկարեկիր երկինքը կը մնայ դեռ Հայ մասսայի հոգու միակ յենակէտը, այդ պատճառով էլ երկնքի ու երկրի միջնորդ սնապլուխների լեգէոնը կարող է մեծամեծ ծառայութիւններ մատուցանել ցեղային վերածնութեան սուրբ Գործին։

Իհարկէ, տարակոյս չ'կայ, որ մենք աւելի բազդաւոր կը լինէինք, եթէ մեր ժողովուրդը մի փոքր թափանցած լինէր մեր դարի ոգու խորերը և հասկանար, որ աշխարհումս կատարուող ամեն մի գործ՝ կախում ունի քացառապես աշխարհումս էլ ապրող արարածների տրամադրութենէն...

Դժբաղդաբար, իրականութիւնը ուրիշ տեսարան կը պարզէ։

Խօ՛ չէ կարելի մի ակնթարթում յեղաշրջել այն, ինչ որ դարերն են բնեռել ժողովրդի սրտի խորքերում!

(10749-57 (2993) 39)

Ուրեմն սեագլուխն էլ անհրաժեշտ դաս է մեզ համար։

Իսկ — հետաքրքիր է — ի՞նչ կը ներկայացնէ ինքնըստինքեան այդ դասը։

Ա՛հ! Ամօթ է ասելն անգամ, որ մեր սեագլուխները քելեխ ուտելու միայն բարի ախորժակ ունին, մէկ էլ... մեռած հային թաղելու! Բայց ի՞նչ կը կամենայ, որ արած լինի, կամ անէ թրքահայ հոգևորականութիւնը։ Ահա թէ ինչ. —

— Երբ կը բարձրանաս ամբիոն, կ'ասէ Դատը, յորդորիր քու հօտին, որ կարէ իրեն ապտակող ձեռքերը, բարձրացնէ ինկած եղբօրը, ուխտի գնայ այն անշուք թմբի վրայ, որի ներքև կը հանգչի աղատութեան անձնանուէր զինուոր-ընկերը... Սովորեցրու քու ժողովրդին, որ եթէ մեծ պատին մէջ հայ-քրիստոնեան տաճկի արիւնը տաքուկ-տաքուկ խմէ — այդ բանը մեղք չի համարեր Աստուած... Հասկացուր նրան, որ կարելի է մեռաքսեղէնի փոխարէն մազեղէն հագնել, բայց տնտեսած գումարովը կենսատու զրահ ձեռք բերել, որ պիտի գիմադրէ քրդու և թուրքի թունաւոր տեգին... Թող բուրվառիդ խնկահոտէն վար չի դաւէ նա վառօդի բուրմունքը... Համոզիր նրան որ իւր բերանի պատառի կէսը չ'մոռանայ անտուն եղբօր տալ։... Իսկ դու, ոսկեայ խաչի փոխարէն փայտեան պահէ ծոցումդ, բայց փիլոնիդ ներքևէն մի՛ հեռացնի արծաթափայլ դաշոյնը, որովհետև Կարմիր Արշալոյսը բացուելիս դրանով միայն կը կարողանաս առաջն ընկնել քու հօտին... Մի խօսքով— սև հագնելով՝ մի սեացներ թէ քու սիրտը և թէ ժողովրդիդ օրն ու արևը!

VII.

Երկու Մայր կը ճանաչեմ, կ'ասէ Դատը։ Դրանցմէ մին՝ գլխակոր, ստրուկ, ամեն բանում ձեռնպահ և ամեն իրաւունքներէ զրկուած, ենթակայ անվերջ հարստահարութիւններ։ Դա—Հայ Կինն է։ Իսկ միւսը՝ կարեկցութեան և հոգեբուղխ սիրոյ կարօտ ու արժանի, ուժասպառ և ստնակոխ, բայց և վերականգնելու տրամադիր։ Մի քանի դար է, ինչ վերջին կինը հիւանդ՝ փրկիչ-բժշկի կըսպասէ... Նորա աչքերէն արցունքը չի դադրիր հոսելէ, կրծքէն՝ արիւնը... Նրա անթիւ, անհամար որդիքը աշնանային տերևների նման ցրիւ են եկել աշխարհի բոլոր անկիւնները. և տարաբաղդ Մօր աստանդական զաւակունքը չեն մտածեր, որ երկրի կենտրոնումը օրհասական վիճակում Մայրը կը հեծէ՞...

Այդ կիներէն առաջնին մենք թոյլ պէտք է տանք, որ պատռէ երեսի քողը. պէտք է ճանչ-

նանք նրա մարդկային իրաւունքները և այնուհետև պահանջենք, որ մեզ հետ ձեռք ձեռքի, սիրտ սրտի տուած՝ դիմաւորէ Կարմիր աշխարհին։ Նրա ներկայութիւնն այնտեղ կը կրկնապատկէ մեր եռանդը և մեզ հնարաւորութիւն կը տայ պարզերես դուրս գալ մեր ընդհանուր Մօր առջև, որ ակնապիշ մեզ կը սպասէ...

— Քու մէջ եռ կուգայ, գիտեմ, կ'ասէ Դատը Հայ կնոջը, վրէժի սեւեռուն զաղափարը, բայց ափսո՜ս, որ սրտով զգացած, մտքով անցուցածդ գործնական ասպարիզում ցոյց տալու հնարաւորութիւն չէ տրուած քեզ... Հարկաւոր է մի լուցկի միայն, որպէսզի բռնկիս դու և այրես, լափես, մոխիր դարձնես քեզ ստրկացնող պայմանները... Ահա՛ այդ լուցկիի փոխարէն Դատի ոսկեփայլ կայծերը — մոտեցի՛ր դու այդ կայծերին!...

* * *

Ահա ձեզ մի «նոր, անսովոր էակ», որին ես չեմ նկարագրեր և կը թողնեմ, որ Դատը ինքը՝ բանաստեղծի հետ թև թևի տուած՝ հարցուփորձի ենթարկէ նրան, այդ նոր էակին։

Պա արուած մի ներքին սրբազան երկիւղածութեամբ՝ Դատը կը հարցնէ նրան գողդոչուն ձայնով.

Ո՞վ ես, որ գաս առանձին-առանձին,
Ձեռքերդ կրծքիդ խաչապէս.

Գլուխդ ծռած իգեսին՝
Լոկիկ առ ո՞ բողոքես, առ ո՞ բողոքես.
Երթալ կ'ուզես՝ կը յուզի՛ս, կը յուզի՛ս...
Արիւնք սիրովը մարդո՞ւ
Կամ սուրբ սիրո՞վը կրօնի,
Որ ասուածն է սրտերու...

Նրան կը պատասխանէ նկարագրուած նոր էակը.

Ես Հայ Աղջիկ եմ զինուոր՝
Տղմուտի մէջ մլրտուած,
Պատմուճաններս են բոսոր.
Ձէնքս է դրօշն յաղթապանծ...

Բայց ուր կերթայ Հայ Աղջիկը?

Զինուոր կ'երթամ Հայաստան
Իմ հէք եղբարց ես սիրով,
Թշուառ Մօրս իմ խաչով
Ազատութեան կարօտով!

Ահա և հարէմի խորքերէն կը լսի մի կիսախեղդ ձայն. —

Ես Հայ Կինն եմ թշուառ՝
Ազատութեան սիրահար,
Կայծակ ու չանթ ինչպէս որ՝
Ջափեմ աշխարհս ես բոլոր...
Զինուոր կ'երթամ Հայաստան,
Կոչնակի վեհ խորհրդով,
Եւ կը մեռնիմ անդ սիրով
Ազատութեան կարօտով...

Կը յուզի՞ Դատի ալեկոծուած սիրտը և, իր կեանքում առաջին անգամն է, որ կ'արտասուէ նա, չիմանալով ուղիղ նայել կայծ ու կրակ Հայ հերոսուհու դէմքին... Այնուհետև նա

կը տեսնի՝ ինչպէ՞ս գրոշակակիր օրիորդին կը հետևին, աշխարհի զանազան ծայրերէն հաւաքված, հայ հերոսների խմբերը՝ պատրաստ իրենց կեանքի գնով ձեռք բերելու անմահ Մայրիկի Ցանկացածը . . .

Եկեր հերոսներէն մի քանիսը թէև մոռացել են հայ լեզուն, բայց սրտերումը վառ է Հայրենիքի սրբազան սիրոյ կրակը, որպէս և զոհաբերութեան գաղափարը, որ նրանց մըղել է մինչև «այստեղ» . . .

Ալեծածան կը փողփողեն գրոշակները՝ իրենց վեհ ծալքերի ներքև պատսպարելով համայն Հայութեան Նոր–Սերնդին։

Եւ Դատը, արիւն–քրտինքի մէջ լողալով, կը բարձրանայ Մասիսի գագաթը և որոտընդոստ ձայնով կը գոչէ .

Մայրիկ Հայաստան,
Սուրբ հողիդ զուրբան,
Ահա ֆեդ կուտամ
Գոչն ազատութեան!

Ու «Հայաստանը» կը հեղեղի՝ վաղո՞ց ցանկալի Կարմիր Արշալոյսի փրկարար շառաւիղներով . . .

Վերջ

ՀՍՍՀ-ԳՍՓ
Ա. Ա. Մանասյան
ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄԱՍ

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1.	Քիւրտ Պէկ (հայ–քրդական կեանքէն	20	կոպ
2.	Արամը	30	„
3.	Անաստուածներ	40	„
4.	Մերձեցում (անուրջներ)	20	„
5.	Սև հարսանիք (պատկեր)	10	„
6.	Դատ (քրիմիքական անալիզ)	10	„
7.	Բանաստեղծութիւններ	—	—

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊԵԿ

Դիմել Հեղինակին այս հասցէով.

М. ШВОДЪ, АНАПА (Россія)

M. CHEVODT, ANAPA (Russie)

ՀՀ Ազգային գրադարան
NL0195171

14572

07
Ц-83